ապա Փէնէզկերտի կամ Փանաւազկերտի վտակը, որ բղխում է Եասամալ եւ Թոփ-Եօ-լու լշ-ից, որոնք Օլթի եւ Արտանուչ գաւառի ջրբաժան գիծն են կազմում։ Փանազ-կերտ վտակը ընդունում է Գերմուջէքի լեռ-

---

ջում էին, որ տեղակալութիւնը-Լուսաւորչի աթոռի յաջողութիւնը իրենց տոհմին յանձնեն, Հայ ժողովուրդն ամբողջովին անձնատուր լինի միայն Լուսաւորչի Պահլաւ յաջորդին, քանի որ նրանք՝ Ալիի-Ֆամիլի ժառանգների նման նախասահմանութիւնից որոշած էին Հայաստանի հոգեւոր գահը բազմելու եւ կառավարելու։ Անշուշտ այս պահանջը հրապարակ չէր գալիս, քանի որ դեռ վաղ՝ Սահակի ժամանակ արդէն Լուսաւորչի տոհմը սպառուած էր եւ վերջին Պահլաւները ներկառարի պղնձի մէջ գուռնաւորուած-ինքնակոչ ժառանգորդներ էին Պահլաւունիների գահի։ Ահա այս պատճառով այսպիսի յաջորդների տաճարները ծուռ, ոչ թէ թէք էին եւ ժողովուրդը ծուռ տաճար էր կանչում, որից առաջացաւ թէք-տաճարը կամ Էյրի-քիլիսան։

Պահլաւները, որ Բագրատունիների հետ Անիում էլ էին ապրում, կալուածներ ունէին նոյնպէս Շիրակում։ Այսօրուան Էյրի-քիլիսայի մօտ գտնուած Մարմաշէղի անուներ հաստատել են Լենինականի մօտ, 6—7 կիլոմետր դէպի հիւսիս գտնուած Ղանլիճա գեղի վրայ Մարմաշէն են դրել եւ արձանագրել տաճարի հարաւային պատի վրայ, որն ապացոյց է, թէ Մարմաշէնի Պահլաւունիները Շիրակ գաղթել են Ուղթիի Մարմաշ գեղից, որն իր գոյութիւնը պահպանել է մինչեւ այսօր։ Ինչպէս երեւում է Պահլաւունի Ղարիբն էլ Բաղդատ, կամ Սամարիա գքռնուած ժամանակը Ամէր-ուլ-Մումինինից հրովարտակ է ձեռք բերել Ռբու-Ղամր տիտղոսով "Լուսն որդիք կամ լուսաւորչական սերունդ»։ այդ տիտղոսով էլ տաճար է շինել տուել Անիում Արուղամրենց Ս. Գրիգոր անունով, որ մինչեւ օրս գոյութիւնը պահպանել է։ Պահլաւունիները միշտ ուզել են Բագրատունիների ժամանակ եպիսկոպոսապետական գահը տոհմականացնել, բայց միշտ անյաջողութիւն են կրել։